Արձանագրություն N 2

**2022-2024 թվականների առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ պատվաստանյութերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«10» «Նոյեմբեր» 2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ Մ. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ Ա. Հարոյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

**1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**

---

**(Մ. Պետրոսյան)**

Ընդունել ի գիտություն, որ 14.10.21թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2021 թվականի նոյեմբերի 1-ին, ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2021 թվականի նոյեմբերի 2-ին ժամը 10:00-ին: 2021 թվականի նոյեմբերի 3-ին ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերություն | Irakli.Todria@sanofi.com | FR5434950537000073 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

**2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

---

**(Մ. Պետրոսյան)**

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

**3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին**

---

**(Մ. Պետրոսյան)**

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***4. Մասնակիցների առաջարկած գների մասին***

---

***(Մ. Պետրոսյան)***

Մասնակցի կողմից ներկայացված վերջնական գները 02.11.2021թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel): Հաշվի առնելով, որ մասնակցիցը ներկայացրել է արտարժույթով գնային առաջարկներ, ուստի գնային առաջարկները հաշվարկվել են հրավերում նշված ՀՀ ԿԲ կողմից սահմանված առավելագույն փոխարժեքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

---

***(Մ. Պետրոսյան)***

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին***

---

***(Մ. Պետրոսյան)***

**Որոշվեց.** «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2021/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝

1. Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

***7. Ընթացակարգի ամփոփման մասին***

---

***(Մ. Պետրոսյան)***

2021 թվականի նոյեմբերի 4-ին «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2021/1» ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարի՝ հրավերում նշված հեռախոսահամարին զանգահարել է Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերությանը իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ՝ Նարինե Սարգսյանը և հայտնել է, որ նշված Ընկերությունից պատրաստվում է նամակ առ այն, որ հրավերը ոչ ճիշտ հասկանալու պատճառով վերջիններս չեն մասնակցել աճուրդին և պատրաստ են

ներկայացնել նոր իջեցված գնային առաջարկ բոլոր հինգ չափաբաժինների մասով: 2021 թվականի նոյեմբերի 8-ին Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարին հասցեագրված գրությունով Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերությունը հաստատել է իր դիրքորոշումը՝ նոր իջեցված գնային առաջարկներ ներկայացնելու կապակցությամբ: Հաշվի առնելով այն, որ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2021/1» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է Առողջապահության նախարարության 2022-2024 թվականների կարիքների համար պատվաստանյութեր ձեռք բերելու նպատակով, և որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերությունը, որը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ինչպես նաև պատվաստանյութեր արտադրող ընկերություն է, և պատրաստ է ներկայացնել նոր իջեցված գնային առաջարկներ, վերջինիս պատվիրատուի ղեկավարի գիտությամբ հրավիրել են բանակցությունների: 2021 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 15:00-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ, որին ներկա են գտնվել նաև Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերության հետևյալ ներկայացուցիչները՝ Իրակլի Տոդրիան՝ Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերության Կովկասում (պատվաստանյութերի գծով) առևտրային գործառնությունների ղեկավարը և Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերությանը իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերության ներկայացուցիչ՝ Նարինե Սարգսյանը: Տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Իրակլի Տոդրիան ներկայացրել է հետևյալ իջեցված գնային առաջարկներ եվրոյով (հրավերը հրապարակելու օրվա դրությամբ էլեկտրոնային աճուրդ համակարգում նշված փոխարժեքի կուրսով՝ 555.89 ՀՀ դրամ 1եվրոն).

| NN | Պատվաստանյութի անվանումը | Կազմակերպության անվանումը | Քանակ | Միավորի գին /եվրո | Գումար/եվրո |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վեցավալենտ /դիֆթերիա, կապույտ հազ, փայտացում, հեպատիտ Բ, Հիբ, պոլիոմիելիտ/ պատվաստանյութ | Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերություն | 405,000 | 20.0 | 8,100,000 |
| 2 | Սեզոնային գրիպի դեմ պատվաստանյութ | Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերություն | 510,000 | 6.0 | 3,060,000 |
| 3 | Մենինգոկոկային մենինգիտի դեմ պատվաստանյութ | Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերություն | 48,000 | 22.0 | 1,056,000 |
| 4 | Կապույտ հազի ԴՏ բջջային | Սանոֆի Պաստեր բաժնետիրական ընկերություն | 300,000 | 15.2 | 4,560,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | բաղադրիչով, դիֆթերիայի, փայտացման, պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութ երեխաների համար (DTaP-IPV) | | | | |
| 5 | Կապույտ հազի ՈՉ բջջային բաղադրիչով, դիֆթերիայի, փայտացման նվազեցված պատվաստանյութ դեռահասների համար (Tdap) | | 105,000 | 15 | 1.575.000 |

Հիմք ընդունելով վերոգրյալը և մասնակցի կողմից ներկայացված հայտը և Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերության պարզաբանումը աճուրդին չմասնակցելու մասին՝

**Որոշվեց.**

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/1» ծածկագրով՝ գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Սանոֆի Պաստեռ» բաժնետիրական ընկերոյան հետ՝ 1, 2, 3, 4—րդ և 5-րդ չափաբաժինների համար՝ 18,351,000 եվրո պայմանագրային գումարով (2021 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ ԿԲ կողմից սահմանված առավելագույն փոխարժեքով՝ 1եվրոն արժե 550.74 ՀՀ դրամ).
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/1» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------- Մ. Պետրոսյան

Անդամներ՝ ---------------- Ա. Հարոյան

---------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------------- Հ. Սարգսյան

ՏԵՂԵԿԱՆՔ

2022-2024 թվականների կարիքների համար ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/2 ծածկագրով գնման ընթացակարգի վերջնական արդյունքները 02.11.2021թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

ՀՀ դրամ

| ՆՆ | Անվանումը | Քանակ | Կազմակերպության անվանումը | Վերջնական առաջարկ ՀՀ դրամով 1-ին տեղ | | | | | Վերջնական առաջարկ Եվրոյով 1-ին տեղ (հրավերում նշված կուրսով 555.89 ՀՀ դրամ) | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար ԱԱՀ-ով | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով | Արժեք առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար ԱԱՀ-ով | Միավորի գին առանց ԱԱՀ | Միավորի գին ԱԱՀ-ով |
| 1 | Վեցավալենտ /դիֆթերիա, կապույտ հազ, փայտացում, հեպատիտ Բ, Հիբ, պոլիոմիելիտ/ պատվաստանյութ | 405,000 | Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերություն | 4,727,844,450.00 | 0.00 | 4,727,844,450.00 | 11,673.69 | 11,673.69 | 8,505,000.00 | 0.00 | 8,505,000.00 | 21.00 | 21.00 |
| 2 | Սեզոնային գրիպի դեմ պատվաստանյութ | 510,000 | | 1,984,527,300.00 | 0.00 | 1,984,527,300.00 | 3,891.23 | 3,891.23 | 3,570,000.00 | 0.00 | 3,570,000.00 | 7.00 | 7.00 |
| 3 | Մենինգոկոկային մենինգիտի դեմ պատվաստանյութ | 48,000 | | 613,702,560.00 | 0.00 | 613,702,560.00 | 12,785.47 | 12,785.47 | 1,104,000.00 | 0.00 | 1,104,000.00 | 23.00 | 23.00 |
| 4 | Կապույտ հազի ՈՉ բջջային բաղադրիչով, դիֆթերիայի, փայտացման, պոլիոմիելիտի դեմ պատվաստանյութ երեխաների համար (DTaP-IPV) | 300,000 | | 2,668,272,000.00 | 0.00 | 2,668,272,000.00 | 8,894.24 | 8,894.24 | 4,800,000.00 | 0.00 | 4,800,000.00 | 16.00 | 16.00 |
| 5 | Կապույտ հազի ՈՉ բջջային բաղադրիչով, դիֆթերիայի, փայտացման նվազեցված պատվաստանյութ դեռահասների համար (Tdap) | 105,000 | | 933,895,200.00 | 0.00 | 933,895,200.00 | 8,894.24 | 8,894.24 | 1,680,000.00 | 0.00 | 1,680,000.00 | 16.00 | 16.00 |